Թ. 00. 01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Դավիթ Գագիկի Աքելյանի՝ «Ֆալիբիլիզմը գիտության փիլիսոփայության արդի հիմնախնդիրների համատեքստում» թեմայով ատենախոսության վերաբերյալ կարծիք

Դավիթ Գագիկի Աքելյանի ատենախոսությունը նվիրված է ժամանակակից իմացաբանության և գիտության փիլիսոփայության առանցքային և կարևոր հիմնախնդիրներից մեկին՝ ֆալիբիլիզմի կամ սխալականության՝ որպես գիտելիքի հավանական սխալականության հայեցակարգի ուսումնասիրությանը: Թեմայի արդիականությունը նախևառաջ պայմանավորված է դասական իմացաբանության չափանիշների և գիտության մեթոդաբանության ճգնաժամով: Դարեր շարունակ ճանաչողության գործընթացում անսխալական և բացարձակ ճշմարտությունների փնտրտուքը ոչ միայն չի հանգեցրել անվիճելի վերջնարդյունքների, այլև ի հայտ է բերել այդ մոտեցման ներքին սահմանափակումներն ու հակասությունները: Ժամանակակից իմացաբանական և մեթոդաբանական վերլուծությունները փաստում են, որ մարդկային ճանաչողությունը և դրա արդյունքները չեն կարող անմասն լինել սխալի ռիսկից և սուբյեկտիվի դրսևորումներից: Այս համատեքստում առաջ են գալիս մի շարք հիմնարար հարցեր՝ կապված գիտելիքի հիմնավորման, դրա հուսալիության և օբյեկտիվության չափանիշների, ինչպես նաև գիտական առաջընթացի և ճշմարտությանը մոտենալու հնարավորությունների հետ, որոնց տեսական քննությունն ու համակողմանի վերլուծությունը կազմում են սույն ատենախոսության բովանդակային առանցքը:

Ատենախոսությունն ունի հստակ տրամաբանական կառուցվածք և հաջորդականություն: Այն բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, որոնցից յուրաքանչյուրն ունի չորսական ենթագլուխներ, ինչպես նաև եզրակացությունից և գրականության ցանկից:

Ատենախոսը ձգտում է վերահիմաստավորել ֆալիբիլիզմը՝ որպես գիտության զարգացման հայեցակարգ, և բացահայտել դրա իմացաբանական, էպիստեմոլոգիական և մեթոդաբանական դերը գիտության փիլիսոփայության մի շարք արդի հիմնախնդիրների համատեքստում՝ մասնավորապես անդրադառնալով գիտելիքի հիմնավորման, օբյեկտիվության և ճշմարտության, գիտական առաջընթացի և գիտության փոփոխության խնդիրներին, ինչպես նաև հիմնավորելով

գիտելիքի հավանական սխալականության սկզբունքի տեսական և գործնական նշանակությունը:

Առաջադրված նպատակին հասնելու համար ատենախոսն իր առջև դնում է մի շարք փոխկապակցված խնդիրներ, որոնցից առավել կարևորներն են.

- վերհանել ֆալիբիլիզմի ձևավորման տեսական նախադրյալները և պատմական զարգացումը տարբեր փիլիսոփայական ավանդույթներում,
- բացահայտել ֆալիբիլիզմի հայեցակարգային դերն ու տեղը գիտության զարգացման մրցակցող տեսությունների համատեքստում,
- հիմնավորել գիտելիքի անսխալականության պայմանի անիրագործելիությունը և դրա տեսական անարդյունավետությունը:

Ատենախոսության մեջ ձևակերպված են մի շարք տեսական և կիրառական նշանակություն ունեցող նորույթներ, որոնցից առանձնանում են հետևյալները՝

- հիմնավորվում է, որ գիտելիքի անսխալականության պահանջը գործնականում անիրագործելի է և տեսականորեն անհիմն,
- ձևակերպվում է գիտելիքի կիրառման տիրույթի սկզբունքը, ըստ որի գիտելիքի արժեքը պայմանավորված է դրա համատեքստային կիրառելիությամբ,
- հիմնավորվում է ֆալիբիլիզմի նորմատիվ-կարգավորող դերը՝ որպես գիտության ինքնուղղման և առաջընթացի մեխանիզմ,
- առաջ է քաշվում և հիմնավորվում է ֆալիբիլիզմի կիրառությունը արտահիմացաբանական ոլորտներում՝ որպես հանրային խոսույթի, բանավեճի և քննադատական մտածողության զարգացման հիմք:

Ատենախոսության առաջին գլխում՝ «Ֆալիբիլիզմի զարգացումը փիլիսոփայական ավանդույթներում», հեղինակը կատարում է ֆալիբիլիզմի ձևավորման պատմափիլիսոփայական նախադրյալների համակողմանի և համակարգված վերլուծություն: Ատենախոսը ցույց է տալիս, որ անտիկ մեղմ սկեպտիցիզմը, Դեկարտի մեթոդաբանական կասկածը և Հյումի ինդուկտիվ սկեպտիցիզմը նախապատրաստել են գիտելիքի անսխալականության դասական իդեալի քննադատությունը՝ հիմք ստեղծելով ֆալիբիլիստական մոտեցման ձևավորման համար: Հետագա վերլուծության մեջ առանձնահատուկ ուշադրություն է դարձվում Չ. Պիրսի և Կ. Փոփերի հայեցակարգերին, որոնց շրջանակում ֆալիբիլիզմը ստանում է համակարգային և տեսականորեն ձևավորված բնույթ՝ ներկայանալով որպես գիտական ճանաչողության սահմանափակումների ընդունման, գիտելիքի ինքնուղղման և գիտական առաջընթացի մեթոդաբանական սկզբունք:

Միաժամանակ, մրցակցող իմացաբանական դիրքորոշումների համեմատական քննության միջոցով հիմնավորվում է, որ թե՛ անսխալականության վրա հիմնված հայեցակարգերը, թե՛ ծայրահեղ սկեպտիցիզմը հանգեցնում են տեսական փակուղիների, մինչդեռ ֆալիբիլիզմը հանդես է գալիս որպես չափավոր, հավասարակշռված և ռացիոնալ մոտեցում, որը համատեղում է գիտելիքի սխալականության ընդունումը դրա շարունակական կատարելագործման հնարավորության հետ:

Ատենախոսության երկրորդ գլխում՝ «Ֆալիբիլիզմը գիտության զարգացման արդի հիմնահարցերում», հեղինակը, հենվելով առաջին գլխում ձևավորված պատմափիլիսոփայական հիմքի և հայեցակարգային վերլուծության վրա, ֆալիբիլիստական իմացաբանության լույսի ներքո վերահիմաստավորում է գիտության փիլիսոփայության առանցքային հիմնախնդիրները: Ատենախոսի հիմնավորմամբ՝ ֆալիբիլիզմը հանդես է գալիս որպես հավասարակշռված մոտեցում՝ պահպանելով ճշմարտությունը որպես կարգավորող ուղենիշ և միաժամանակ այն ներկայացնելով որպես դինամիկ, վերանայելի իրողություն, ինչն արտահայտվում է նաև սուբյեկտիվության և օբյեկտիվության հակադարձ հարաբերականության սկզբունքի ձևակերպմամբ: Գիտելիքի հիմնավորման խնդրի վերլուծության շրջանակում բացահայտվում են դասական հայեցակարգերի սահմանափակումները և առաջադրվում է գիտելիքի կիրառման տիրույթի սկզբունքը, ըստ որի գիտելիքի արժեքը պայմանավորված է դրա համատեքստային կիրառելիությամբ: Գիտական առաջընթացի և գիտության փոփոխության մոդելների համեմատական քննության արդյունքում հիմնավորվում է, որ ֆալիբիլիզմը հանդես է գալիս որպես գիտության ինքնուղղման նորմատիվ-կարգավորող սկզբունք՝ ապահովելով դրա դինամիկ զարգացումը: Արտահմացաբանական ոլորտներում կատարված միջգիտակարգային ընդլայնման միջոցով ֆալիբիլիզմը ներկայացվում է որպես սոցիալ-քաղաքական, կրթական և էթիկական գործընթացներում կիրառելի մոտեցում:

Ընդհանուր առմամբ, առաջին գլուխը ձևավորում է ամուր տեսական և մեթոդաբանական հիմք՝ ապահովելով աշխատանքի գաղափարական ամբողջականությունն ու տրամաբանական հաջորդականությունը, իսկ երկրորդ գլխում ատենախոսն ի ցույց է դնում տեսական բարդ հիմնախնդիրները վերլուծելու և ինքնատիպ գիտական լուծումներ առաջադրելու կարողություն, ինչը ամբողջացնում և հիմնավորում է աշխատանքի լրջությունն ու դրա գիտական նշանակությունը:

Չնայած կատարված ծավալուն և արժեքավոր աշխատանքին, ատենախոսությունը զերծ չէ որոշակի խնդրահարույց կետերից և բացթողումներից, որոնց վերաբերյալ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ դիտողությունները.

1. Ատենախոսը խորությամբ վերլուծում է «զիջողական գիտելիքի վերագրման» և «գիտելիքի հիմնավորման շեմի» խնդիրները՝ հանգելով «գիտելիքի կիրառման տիրույթի» սկզբունքի անհրաժեշտությանը: Թեև հեղինակը նշում է, որ գիտելիքի ճշմարտության արժեքը և հիմնավորվածությունը պետք է որոշարկել տվյալ տիրույթի (համատեքստի) սահմաններում, այնուամենայնիվ, աշխատանքում հստակորեն սահմանված չեն այն գործնական և օբյեկտիվ մեթոդաբանական չափանիշները, որոնցով գիտական համայնքը կարող է ճշգրտորեն գծել և տարանջատել այդ «տիրույթների» սահմանները: Արդյո՞ք այդ սահմանազատումը բացառապես կոնվենցիոնալ բնույթ է կրում, թե՞ գոյություն ունեն տիրույթը սահմանող ունիվերսալ էպիստեմոլոգիական չափորոշիչներ. այս հարցը մնում է մասամբ անպատասխան և կարիք ունի լրացուցիչ պարզաբանման:
2. Սոցիալ-քաղաքական տիրույթում ֆալիբիլիզմը վերլուծելիս ատենախոսը հաճախ միանշանակորեն և անքննադատաբար է մոտենում Կ. Փոփերի գաղափարներին: Ատենախոսը գրում է. «...փոքր քայլերով ինժեներիան կառուցված է ճանաչողական խոնարհության և քննադատական ռացիոնալիզմի վրա. այն ընդունում է, որ մեր սոցիալական գիտելիքը միշտ մասնակի է, և հետևաբար փոփոխությունները պետք է իրականացվեն աստիճանաբար...» (ատ. էջ 164-165): Փոփերի սոցիալական ինժեներիան ժամանակակից քաղաքագիտության և սոցիալական փիլիսոփայության կողմից հաճախ քննադատվում է իր տեխնոկրատական բնույթի և համակարգային ճգնաժամերին համարժեք արձագանքելու անկարողության համար: Ատենախոսությունը զգալիորեն կշահեր, եթե հեղինակն այս հարցում ցուցաբերեր առավել ընդգծված քննադատական մոտեցում՝ անդրադառնալով սոցիալական ինժեներիայի նկատմամբ առկա ժամանակակից տեսական հակափաստարկներին, մասնավորապես՝ դրա սահմանափակումներին, ինչպես նաև սոցիալական բարդ և ոչ գծային համակարգերում կիրառելիության խնդիրներին:
3. Ատենախոսությունում կան մի շարք դրույթներ և ձևակերպումներ, որոնք կարիք ունեն լրացուցիչ մեկնաբանության և պարզաբանման: Կառանձնացնեմ հետևյալ օրինակը: Անդրադառնալով մաթեմատիկական և ֆորմալ-տրամաբանական

գիտելիքներին ու Չ. Պիրսի հայացքներին՝ ատենախոսը գրում է. «Եթե անգամ մաթեմատիկական դրույթները «տեսականորեն անհրաժեշտ և անսխալական» են, դրանք գործնականում անխուսափելիորեն սխալական են, քանի որ մարդկային (սուբյեկտիվի) գործոնը դրանց վերաբերյալ մեր հիմնավորումներն ու ապացույցները դարձնում է սխալական» (ատ. էջ 40): Այստեղ, կարծում եմ, կա հասկացութային որոշակի շփոթ, որը պարզաբանման կարիք ունի:

Նշված դիտողությունները, սակայն, չեն նսեմացնում ատենախոսության ընդհանուր գիտական բարձր արժեքը: Դավիթ Աքելյանի ատենախոսությունը ինքնուրույն, ավարտուն և համակողմանի հետազոտական աշխատանք է, որում լուծված են գիտական կարևոր նշանակություն ունեցող խնդիրներ: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և արտացոլում է հետազոտության հիմնական դրույթներն ու ստացված արդյունքները:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ գտնում եմ, որ Դավիթ Գագիկի Աքելյանի «Ֆալիբիլիզմը գիտության փիլիսոփայության արդի հիմնախնդիրների համատեքստում» թեմայով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Թ.00.01 «Փիլիսոփայություն» մասնագիտությամբ փիլիսոփայական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պարգև Սերգեյի Ավետիսյան
Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

30.04.2026թ.

Մասնագետի՝ Ավետիսյանի Պարգև Սերգեյի ստորագրության իսկությունը հաստատում եմ.

ՌՀՀ գիտքարտուղար
Ռ.Ս. Կապարյան

00053474